

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ  
ԱՐԺ. Տ. ՄԵՍՐՈՊ ԱԻԱԳ ՔՅՆՅ. ՍԱՐԱՖԵԱՆԻ ԵՒ  
ԱՐԺ. Տ. ԳՈՒՐԳԷՆ ԱԻԱԳ ՔՅՆՅ. ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Առաջնորդ Սրբազան Հօր որոշումով, Կիրակի, Յունուար 17ին թեմիս եկեղեցիներուն մէջ Հոգեհանգստեան Մասնաւոր Պաշտօն կատարուեցաւ Օգլընտի երկարամեայ Հոգեւոր Հովիւ՝ Հոգեւոյս Տ. Մեսրոպ Աւագ Քինյ. Սարաֆեանի հոգիին համար՝ անոր վախճանման առաջին տարելիցին առթիւ եւ Կլէնտէյլի Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցւոյ խոստովանահայր՝ Հոգեւոյս Տ. Գուրգէն Աւագ Քինյ. Մուրատեանի վախճանման քառասունքին առթիւ:

*«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:*